

ԱԻԴԱ ՄԱՐԱՆՋՅԱՆ-ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

*Բանասիրական գիտությունների թեկնածու
Ռուսաստանում ՀՀ դեսպանատան մշակույթի
կենտրոնում գործող հայագիտական ամբիոն*

aida.marandzhyan@mail.ru

ORCID iD: 0009-0003-1223-2618

DOI: 10.54503/978-5-8080-1587-6-168

ԽՈՐՀՐԴԱՆԻՇՆԵՐԸ ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ՔՆԱՐԵՐԳՈՒԹՅԱՆ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Բանալի բառեր - Ծով, Տիեզերք, Անապատ, Արև, Մենություն, Գեղեցիկ, խորհրդանիշ:

Ամփոփում

Ավ. Իսահակյանի քնարական հերոսը անհաշտության գերադրական լարումով փարվում է Տիեզերքի խորություններին, հանձնվում անապատին, ձուլվում ծովային տարերքին, հրդեհվում արևի կիզանուտ շողերի մեջ, անդորրը գտնում Նիրվանայի հավերժալուռ անհունության մեջ: Այս խորհրդանշաններով՝ Տիեզերք, Ծով, Անապատ, Արև, Իսահակյանը մոտենում է սիմվոլիստական գեղագիտությանը: Բանաստեղծի՝ 1903-1915 թվականներին գրված երգերում և «Հիշատակարան»-ի խոհերում պատկերային համակարգը դառնում է բազմաշերտ, համալուծվող, ինչը բնորոշ էր ռուսական և արևմտյան խորհրդապաշտական դպրոցներին:

Հոդվածի նպատակն է՝

— առանձնացնել և համակարգել Իսահակյանի քնարերգության խորհրդանիշների իմաստասիրությունը ռուսական և արևմտյան խորհրդապաշտների գեղագիտական համակարգում,

— դիտարկել խորհրդապաշտական ուղղության դրսևորումը Իսահակյանի «Հիշատակարան»-ի առանձին հատվածներում, 1903-1915 թվականների մի շարք բանաստեղծություններում, «Աբու-Լալա Մահարի» պոեմում:

Թեմայի ուսումնասիրության հիմնական խնդիրն է՝

— ներկայացնել խորհրդապաշտական գեղագիտության հիմնական առանձնահատկությունները և դրանց արտահայտությունը Արևմուտքի բանաստեղծների և Իսահակյանի քնարերգության մեջ:

Թեմայի արդիականությունը և գործնական նշանակությունը պայմանավորված են՝

— խորհրդապաշտական ուղղության՝ իմաստասիրություն և գեղագիտական վարդապետություն դառնալու միտվածության ներկայացմամբ,

— խորհրդապաշտական գեղագիտության համամարդկային բովանդակությամբ,

— Իսահակյանի լավագույն բանաստեղծությունների՝ խորհրդապաշտության ազդեցությունը կրելու հանգամանքով, քանի որ դրանք հետապնդում են հավերժական թեմաներ, այն է՝ բացահայտել Տիեզերքի գաղտնիքը՝ Կյանքի և Մահվան առեղծվածը:

AIDA MARANJYAN-MARTIROSYAN

PhD in Philology

*The Department of Armenian Studies at the
Cultural Center of the Armenian Embassy in Russia*

aida.marandzhyan@mail.ru

ORCID iD: 0009-0003-1223-2618

SYMBOLS IN THE AESTHETIC SYSTEM OF AVETIK ISAHAKYAN'S LYRICS

Keywords: Sea, Space, Desert, Sun, Loneliness, Beauty, Symbol.

Abstract

The hero of Isahakyan's lyrics, with a superhuman tension of irreconcilability, soars into the depths of the Universe, surrenders to the desert, merges with the sea element, burns in the fading rays of the sun, finds peace in the eternal immensity of Nirvana. With these symbols, Isahakyan approaches symbolist aesthetics.

In the songs written in 1894-1916 and in the thoughts of the "Memory", the image system becomes multilayered, interpenetrating, which was characteristic of the Russian and Western symbolic school.

The aim of the article is to:

— identify and systematize the philosophy of symbols in Isahakyan's lyric poetry within the aesthetic framework of Russian and Western Symbolists;

— examine the manifestations of Symbolist tendencies in selected sections of Isahakyan's "Diary", in several poems from 1903–1915, and in the poem "Abu-Lala Mahari."

The main objective of the study is to:

— present the key characteristics of Symbolist aesthetics and their expression both in Western poetry and in Isahakyan's lyric verse.

The relevance and practical significance of the topic are determined by:

— the demonstration of Symbolism's tendency to evolve into a philosophical and aesthetic doctrine;

— the universal, humanistic content of Symbolist aesthetics.

—The poet was moving from modernity to eternity. His desire to leave real life, to soar into the depths of the Universe was connected, first of all, with the national tragedy. And not only. In the face of the darkness of the real world, the idea of perfection had become obscured, and the poet's only solace was the longing for the Otherworld, eternal Nirvana.

АИДА МАРАНДЖЯН-МАРТИРОСЯН

Кандидат филологических наук

Кафедра арменоведения Культурного центра

Посольства Республики Армения в России

aida.marandzhyan@mail.ru

ORCID iD: 0009-0003-1223-2618

СИМВОЛЫ В ЭСТЕТИЧЕСКОЙ СИСТЕМЕ ЛИРИКИ АВЕТИКА ИСААКЯНА

Ключевые слова: Море, Космос, Пустыня, Солнце, Одиночество, Красота, Символ.

Аннотация

Герой лирики Исаакяна со сверхчеловеческим напряжением непримиримости взмывает в глубины Вселенной, предается пустыне, сливается

с морской стихией, сгорает в угасающих лучах солнца, обретает покой в вечной безмерности Нирваны. Этими символами Исаакян приближается к эстетике символистов.

В песнях 1894–1916 годов и в размышлениях «Воспоминания» образная система становится многослойной, взаимопроникающей, что было характерно для русской и западной символической школы.

Цель статьи заключается в следующем:

— выявить и систематизировать философию символов в лирике Исаакяна в контексте эстетической системы русских и западных символистов;

— рассмотреть проявление символистского направления в отдельных разделах «Дневника» Исаакяна, в ряде стихотворений 1903–1915 годов, а также в поэме «Абу-Лала Махари».

Основная задача исследования:

— представить основные особенности символистской эстетики и их выражение в поэзии западных поэтов и в лирике Исаакяна.

Актуальность и практическая значимость темы обусловлены:

— выявлением стремления символизма к трансформации в философско-эстетическое учение;

— общечеловеческим содержанием символистской эстетики.

— Поэт двигался от современности к вечности. Его стремление уйти от реальности, И не только. Перед лицом тьмы реального мира представление о совершенстве померкло, и единственным утешением поэта стала тоска по Иному миру, вечной Нирване.

Ներածություն

19-րդ դարավերջից հայոց բանաստեղծությունը զարգանում է նոր աշխարհատեսությամբ, գեղարվեստական այլ մտածողությամբ և գրական նոր ուղղություններով: Համաշխարհային բանաստեղծության խորացող տեղաշարժերում Գյոթե-Բայրոն-Շիլլեր-Հայնե-Պուշկին-Լերմոնտով ուղեգծով զարգանում և հիմնավորվում է արվեստի ազատագրումը կրոնի կապանքներից և Աստծու հաստատումը մարդու սրտում:

19-րդ դարավերջը և 20-րդ դարասկիզբը կատարյալ հեղաշրջում էին բանաստեղծության թեմատիկայի և արվեստի բնագավա-

ռում: Գիտության և տեխնիկայի զարգացումը, արվեստի հաջողությունները հետևանք էին ուժերի գերմարդկային լարումի, մտքի և տաղանդի կատաղի մրցման: Եվ հենց այդ նույն պայմաններն էլ առաջ բերեցին անհաշտ եսասիրություն, անսասնձ սնափառություն, հոգևոր անկում, նրբին արատներ և նույնքան նրբին տառապանք:

19-րդ դարասկզբի իդեալիստները կանխատեսում էին այդ տանջանքներն ու հոգին կործանող արատները: Եվ նրանք փախչում էին քաղաքային աղմկոտ կյանքից, ուր առասպելական շոայլությամբ շողշողում էին աշխարհիկ կյանքի հրապույրները, որոնց նույնիսկ չէին դիմանում ամենաբարձր հույզերով և ազնիվ ձգտումներով հոգիները: Քաղաքն իր վիթխարի շարժման մեջ կործանում էր հավատն ու միստիկ անուրջները, ուրքի տակ էր տալիս թույլ, երազող մարդկանց, ոչնչացնում սեր, հեգություն, հնազանդություն, անխնայորեն ավերում այն ամենը, ինչ հանդիպում էր ճանապարհին:

Ամեն ինչ սկսվեց առաջին ռոմանտիկներից: Շատորբիան, Հյուգո, Լեոպարդի. այս իդեալիստները հրաժարվում էին փառքի և հարստության կատաղի հետապնդումից: Նրանց հանճարը չէր գնահատվում, և նրանք փախչում էին հասարակությունից՝ ողբալով աշխարհի անկումը: Հոգիների մեջ պահած լավագույն ձգտումներն ու մեծ Անհայտին ուղղված հայեցումները՝ նրանք հեռանում էին՝ խորապես խոցված միջավայրի անտարբերությունից և հաշտ իրենց մեծության հետ: Նրանց կերտած հերոսներն իրենց համար տեղ էին որոնում ամերիկյան վայրենիների մեջ, օվկիանոսի անսահման տարածությունների վրա, շվեյցարական ծյունապատ գագաթներին, դառնում ավազակ կամ աննպատակ թափառում աշխարհից աշխարհ և այդ ամբողջ ժամանակ նրանք միշտ դուրս էին հասարակությունից: «Առաջին ռոմանտիկները, գրում է Արթյուր Ռեմբոն իր «Պայծառացումներում», - տեսանողներ էին... Ռոմանտիկների երկրորդ սերունդը անչափ տեսանող է: Թեոֆիլ Գոթիե, Լըքոնտ դը Լիլ, Թեոդոր դը Բանվիլ... Բողերն առաջին տեսանողն է, բանաստեղծների արքան, իսկական աստված» (Ռեմբո, 1991: 148-149):

Իր աշխարհագրացողությամբ Ավետիք Իսահակյանը նույնպես գոյության խորհուրդները քննող բանաստեղծ է: Երկար տարիներ

ապրելով Արևմուտքի զարգացած երկրներում՝ Գերմանիա, Իտալիա, Ֆրանսիա, բնականաբար, նրա քնարերգությունը պիտի կրեր ինչ-ինչ ազդեցություններ: Դեռ 1894 թվականին «Հիշատակարան»-ի էջերում և շատ բանաստեղծություններում արդեն կային գերիրական ոլորտների հեռանալու, մեկ այլ, անհայտ աշխարհի հայտնաբերելու տրամադրություններ: 1894 թվականին «Հիշատակարան»-ում նա գրում է. «Բայց ուր գաղտնիք ու խորհրդավորություն չկա- պոեզիա էլ չկա» (Իսահակյան ա, 1977: 151): Իսկ մի քանի տարի անց՝ 1899 թվականին, ինչպես գրում է Դերենիկ Դեմիրճյանն իր հոդվածում, Իսահակյանը նրան խորհուրդ է տալիս. «Հիմա պետք է գրել միստիկական ոճով, խորհրդավոր, հոգեկան խորը, փիլիսոփայական բովով անցած բաներից» (Сутырин, 1928: 195-196):

Խորհրդանիշները՝ որպես ներաշխարհային պայծառացումներ. Նիրվանա, Տիեզերք

Բանաստեղծի գրչի տակ կյանքի և մահվան, անցողիկի և հավիտենականի խորհուրդները մարմին են առնում մարդու և հավերժող բնության հարաբերակցությամբ: Բնության և արվեստի վսեմ գաղտնիքների հայեցողության մեջ քնարական հերոսը ձգտում է հասնել անմահության, ծուլվել Տիեզերքի հավերժալուռ անհունությանը, գտնել մարդկային հոգու կորած ներդաշնությունը. «Ես տիեզերքի եզերքն եմ,- գրում է Իսահակյանը,- ես հերոս եմ. ինձնից է սկսվում ամեն մի ճշմարիտ բան. ես այն ափն եմ, ուր կյանքի խարխսն է ձգված. այս ափից բռնեցեք, ո՛վ մարդիկ, և կտեսնեք լույս ու կյանք: Հերոսը տիեզերքի եզերքն է - ողջ ալիքները դիպնում են նրան, և նա մնում է ամուր, պայծառ և կենսատու» (Իսահակյան ա, 1977: 155):

Իսահակյանն արդիականությունից էր գնում հավերժություն: Նրա՝ իրական կյանքից հեռանալու, Տիեզերքի խորքերը սավառնելու տենչանքը ամենից առաջ կապվում էր ազգային ողբերգության հետ: Եվ ոչ միայն: Իրական աշխարհի խավարի դիմաց մթագնել էր կատարելության գաղափարը, և բանաստեղծի համար միակ սփոփանքը մնացել էր Անդրաշխարհի տենչանքը, մի Անհայտ, նորոգ կյանքի լուսաբաղձ երազանքը. «...Թա՛փ կուտամ թևերս ու կըսավառնեմ // Խորքերը դեպի մեծ տիեզերքի.- // Արևներ խըլեմ, պատգամներ վըսեմ //

Մի ազա՛տ, պայծա՛ռ, մի նորո՛գ կյանքի: // Թա՛փ կուտամ թևերս ու կըսավառնեմ // Ձերո՞ ձեր օրենքից, բըռունցքից դաժան.- // Իմ անհատական ոլորտըս կուզեմ, // Ուր կամքըս լինի օրենքըս միայն» (Իսահակյան, 1987: 82):

Իսահակյանը մեծ խորությունների բանաստեղծ է. «Միայն խորության մեջ են սիրտն ու միտքը», - գրում է «Հիշատակարան»-ում (Իսահակյան ա, 1977: 71): Ահա թե ինչու, քանի գնում, խորանում է թախիժը, հայրենիքի ցավը դառնում է անձնական ողբերգություն, և նա փորձում է թափանցել ու հասնել իրերի ակունքին, տեսողական ու ձայնային անհուն զգացողություններով ծուլվում է երկնքին, աստղերին, և հոգին տիեզերագագողությամբ լցված՝ փորձում է հասնել Երանելի Սկզբին՝ Նիրվանային. «Ես էլ կմարիմ, բայց թողեք լույս տամ առաջ արևի պես, կայծակի պես այրվեմ... Հետո ողջ տիեզերքի հետ Նիրվանայում կնիրհենք» (Իսահակյան ա, 1977: 107): Նրա՝ Երազողի հոգին թափառում է կշռելի իրականության և լռանիստ անտառի մեղմանուշ շշուկների դյութական կախարդանքի մեջ: Միտքն ազատ է, և զմայելի ներքնատեսությամբ բանաստեղծն ընկալում է երկնային մարմինների աներևակայելի խաղերը, փարվում Լուսաստվերին. «...Ես խորիում եմ ներանձնացած // Լույսի մեջ գերանդորր, // Հոգիս՝ զվարթ, սիրտըս՝ հանգիստ // Ձերո՞ կրքերից բռնավոր: // Եվ բնության ծիրերից դուրս, // Անհունի մեջ անուրջի, // Ես ապրում եմ հավերժաբար // Առանց վշտի ու տենչի» (Իսահակյան, 1987: 204):

Իսահակյանի քնարերգությունը զարգանում է զուգադիր աշխարհատեսությամբ: Առաջինը ժողովրդական երգի լուսեղեն ակունքն է, որի կախարդանքը, ինչպես Հայնեն, ինքը ևս զգում էր վաղ հասակից: «...Ժողովրդական երգի հետևությամբ, նրա զուգահեռական կառուցվածքի ու պատկերավորության ոգով Իսահակյանը հեղաշրջում է քնարերգության արտահայտչական արվեստը» (Չաքարյան, 1977: 18): Բանաստեղծի մայրերգությունը, սիրերգությունը, հայրենասիրական, խոհական բանաստեղծություններն իրենց շերտերում կրում են ժողովրդական կենսասիրական աշխարհագագացողության իմաստասիրությունը: Ժողովրդի հոգևոր աշխարհի պատկերումն անցնում է անչափելի տարածություններով. «Կենսաբեր բնության և

նրա երևույթների աստվածացում և մարդեղացում,- գրում է Ալմաստ Ջաքարյանը,- արգասավոր կյանքի, մարդ արարածի, նրա հոգևոր զարթոնքի և բնության բեղուն կյանքի նույնացում - Իսահակյանի ստեղծագործությունը հունավորվում է խաչավորվող նման երակներից՝ ամենուրեք նշանավորելով ժողովրդի, մարդ արարածի կենսական հարազատությունը մայր բնությանը և մարդուն» (Ջաքարյան, 1977: 95):

Երկրորդը նրա խոհական երգերն են, «Աբու-Լալա Մահարի» պոեմը: Այս շարքի գործերում արդեն փոխվում է պատկերային համակարգը, թանձրանում են ներսուզումները, բանաստեղծն ավելի է խորանում ինքն իր մեջ, նվագները դառնում են բազմաշերտ, երկպալան, ինչը հատուկ էր խորհրդապաշտական գեղագիտությանը: Բացարձակի, Անհունի իմաստասիրությունը թե՛ «Հիշատակարան»-ի էջերում, թե՛ հայեցողական երգերում դառնում է հիմնական թեմա. «Ամբողջ տիեզերքն իր անվերջությամբ և անհունությամբ ինձ մի երազ է թվում: Կարծես քնած եմ և երազ եմ տեսնում - զարմանալի, սքանչելի երազ, որ հավիտյան է, որ վեհ է, շատ հուսահատեցուցիչ ու խորին լուռ... ..Միայն հավիտենականության մեջ կա կյանք» (Իսահակյան ա, 1977: 83-85): Ներաշխարհային այս պայծառացումներն են բացարձականում նաև Ալ. Բլոկի, Մ. Մետերլինկի, Ար. Ռեմբոյի, Վ. Տերյանի, Ե. Չարենցի, Տ. Չրաքյանի բանաստեղծություններում:

Սիմվոլիզմը՝ որպես գեղագիտություն, միանշանակ և միանգամից չի ընդունվել, և այն քննադատները, որոնք սիմվոլիզմը համարում էին անհարիր հայ իրականությանը, (Կամսար Գրիգորյան, Հեկտոր Ռշտունի) խորապես չէին ուսումնասիրել ուղղության ակունքները, այն բազմաշերտ համակարգը, որն էապես տարբերվում էր դեկադենտական (անկումային) աշխարհընկալումից: Գրական բանավեճի այս դիտարկումները մեջբերվել է նաև Վ. Տերյանի, Սիամանթոյի, Մ. Մեծարենցի երկերի գեղարվեստական քննության աղիթով, և այժմ տեղին է վերհիշել Սերգեյ Սարինյանի այս մեկնությունը. «Քայց ինչու՞ հայ գրականությունը, համընթաց գնալով գեղարվեստական զարգացման համաշխարհային գրականության զարգացման պրոցեսին, կարող էր յուրացնել կլասիցիզմը, սենտիմենտալիզմը, ռոմանտիզմը և

ռեալիզմը, իսկ սիմվոլիզմի հանդեպ մնար աննախապաշար» (Սա-
րինյան, 1988: 164):

Սիմվոլիզմը՝ որպես գեղագիտություն, ոչ այլ ինչ է, եթե ոչ ռո-
մանտիզմի մի ձևը, միայն այն տարբերությամբ, որ կյանքի վրա ունե-
ցած ռոմանտիկական հայացքը կորցնում է իր իրավունքներն ու նշա-
նակությունը և տեղի է տալիս բանականությանը, սակայն բանական
իմացության հետ միասին նրա միջով անցնում է խորհրդավորը,
առեղծվածայինը, անըմբռնելին: Ռոմանտիզմն աշխարհն անցկաց-
նում է երևակայության միջով: Սիմվոլիստը, ի տարբերություն ռոման-
տիկների, վերցնում է ոչ թե առեղծվածայինը, գոյություն չունեցող
պատկերները, այլ վերցնում է կենդանի մարդկանց՝ նրանց վրայից
դեն նետելով երկրային շղարշը և պահելով լոկ մի թույլ կապ իրակա-
նության հետ. «Այս մութ, հեքիաթային, «հիվանդոտ և հոգնած», սա-
կայն անկասկածելիորեն ուժեղ շարժումից է կախված եվրոպական
գեղարվեստի, գուցե և ամբողջ քաղաքակրթության ապագան», - դեռ
1906 թվականին գրում էր Սիմեոն Հակոբյանը» (Հակոբյան, 1906: 40):

Նա մեկն էր այն եզակի քննադատներից, ովքեր հենց սկզբից
անվերապահորեն հավատացին խորհրդապաշտներին՝ նրանց հետ
կապելով «գեղարվեստի զարգացման հեռանկարը»: Հին աշխարհի
իմաստասերների և միջնադարի մտածողների ձգած կամուրջը դեպի
ենթագիտակցական, բնազանցական աշխարհ քիչ էր մնում կործան-
վեր խիստ գիտական դարի կողմից, և խորհրդապաշտ բանաստեղծն
իր ամբողջ էությամբ ձգտում էր դեպի այդ կամուրջը՝ հաստատելով
վերիրական կյանքի բացարձակ գաղափարը: Այս իմաստասիրությ-
յամբ է Իսահակյանը մոտենում սիմվոլիզմի գեղագիտությանը.
«...Զարգանալ մինչև Նիրվանա, ու սուզվել այնտեղ - սուզվել ճշմար-
տության, աստվածության մեջ. Նիրվանան լոկ ճշմարտությունն է և
ամենի վերջը... Նա տիեզերքի երազն է, կյանքն է, հիացմունքն է...
Միայն Նիրվանայով կարելի է ոգևորվել... Նիրվանան՝ մնայուն, հավի-
տենական» (Իսահակյան ա, 1977: 77):

Ըստ Մ. Մետերլինկի ուսմունքի՝ սովորական, աշխարհային ճա-
նապարհներն ավարտվում են ֆիզիկական մահով, սակայն կա իմա-

ցական «ընդհանուր մի հայրենիք», որտեղ գոյություն ունի ավելի խորը, խորհրդավոր մի ճշմարտություն, քան նյութականն է:

Տերյանի քնարերգության իմաստասիրական աշխարհում նույնպես հաստատվում է «ընդհանուր հայրենիքի» գաղափարը, ուր հեռանում են տառապանքով և վերադառնում առանց դժվարության. «Երբ մենք հեռու կըլինենք, // Երբ կանջատվենք առհավետ, // Հիշի՛ր, որ կա սրբազան // Հանդիպումի արահետ... // Դու կըլինես իմ հոգում, // Դու ամեն տեղ կլինես, // Որպես քաղցր մի խոկում, / /Եվ անմարմին և անտես: // Մեզ ամեն ինչ այս երկրում // Հմայում է և խաբում. // Բայց կա անհաս մի բերկրում, // Հրաշք-անկարծ հանդիպում... » (Տերյան, 1972: 197):

Վալերի Բյուսոսովը, գնահատելով բանաստեղծի խոհական երգերը, «Հայաստանի պոեզիան» անթոլոգիայի առաջաբանում գրում է. «Իսահակյանի ստեղծագործության մյուս կեսը կազմում են նրա հայեցողական բանաստեղծություններն ու «Աբու Լալա Մահարի» պոեմը, որոնցում հատկապես բացահայտ է գրականության սիմվոլիստական շրջանի ազդեցությունը: Այստեղ Իսահակյանը հանդես է գալիս որպես մեկը եվրոպական բանաստեղծներից՝ իր առջև դնելով նույն կամ նման խնդիրներ, որոնց լուծմանն են ձգտում նաև այլ ժողովուրդների՝ ֆրանսիացի, գերմանացի, ռուս քնարերգուները... Այս բանաստեղծություններով կարելի է դատել, թե ինչ մեծ վարպետ ունի հայ գրականությունը՝ ի դեմս Ավետիք Իսահակյանի» (Армянская поэзия, 1956: 56):

Ջրային տարերք. Ծովը՝ որպես Անհունության առեղծված

Իսահակյանի խոհական նվագներում թանձրանում է Ծովի պատկերը՝ որպես ազատության բաղձանքի և Անհունության խորհրդանիշ: Բանաստեղծի համար Ծովն սկիզբն է ամեն ինչի՝ անմեկնելի առեղծված, տարաշխարհիկ մի խոստում, անվախճանորեն օղակ-օղակ հյուսվող մի թվերգություն, հազար անգամ փառաբանված և երբեք չհասկացված, ինչպես չի ընկալվում կատարյալ գեղեցկությունը, անպարտելի հզորությունը: Որպես տաղասաց՝ նա իր դեմքն է դարձնում ջրերին, և էությունը թրթռում է լայնածուխ ծովի բյուրականիո հեքից. այդպես նկարիչը առատորեն սփռում է իր գույները ու չի հաս-

նում լույսի անըստգյուտ արտացոլմանը, և երաժիշտն սկսում է իր վսեմ ներքողը տիեզերական և չի հասնում ծովի բազմակերպության առեղծվածին. «Ողջ բնությունը ծովի լեզվով խոսում է ինձ հետ, երգում ինձ համար, խորհում է իմ առաջ, իմ մեջ խոսում, երգում, խորհում է տիեզերքը... Բաց էր իմ սիրտը, և այն բացել էի մեծ ծովի առաջ...Ծովը եռում էր - սիրտս եռում էր: Ծովը սրտումս եռում էր: Ծովը շաչում էր, փրփրում, լալիս... Ես պիտի մեռնեմ ու մի կաթիլ լինեմ ծովում... Ես ամենամեծերից մեծն եմ, ամենափոքրերից փոքրը - տիեզերք եմ ու կաթիլ» (Իսահակյան ա, 1977: 232):

Մեծ թիվ են կազմում Իսահակյանի ծովային պատկերները, առավել, քան տիեզերքին և անապատին ծոնված երգերը: «Կենսական ծովի հույզերի միջին», «<Եռու ափերում միտքս թափառեց», «Դուման առավ ծովը բոլոր», «Երագիս մեջ ծովը տեսա», «Ծովն ալեկոծ, սանձակոտոր», «<Ոգնած ծովը փրփուրը բերնին», «Երագիս տեսա, որ ծովի ափին», «Առավոտուն ծովը ճաճանչում», «Անհայտ ծովերի լազվարթ ափերին», «Ինչպես կուզեմ սիրտս թաղեմ» և այլ երգերում կրկին հառնում է ծովը՝ որպես հանգրվան մենակ սրտերի: Բոլոր պատկերներում կա մի ընդհանուր տրամադրություն. Ծով-Ազատության գաղափարն ընկալվում է երանության նման:

Նյութական, արատավոր իրականության մեջ ծովի գաղափարը երանության բերկրանք է պարզևում: Ծով-Տիեզերք-Լույս պատկերներն անընդհատ նորոգվող անցումներում նույնանում են: Ծովը՝ Տիեզերքի խորհուրդներով լեցուն, ընկալվում է որպես Անսահմանություն, որպես նախաստվածային թռիչք, որպես հակադրություն իրական կյանքին, դառնում է տիեզերական անուրջի գաղափար, սփոփանք, հենարան:

Նույն՝ ծովին փարվելու, «մեծածուփ հրային երանգներին» ձուլվելու անըջանքն է արևմտահայ խորհրդապաշտ բանաստեղծ Ինտրայի (Տիրան Չրաքյան) ներաշխարհային պայծառացումներում: Լինելով առաջին հերթին գեղանկարիչ-բանաստեղծ՝ Ինտրան, բարձրագույն գերզգայունությամբ «հրահալած գույներու շունչեր վերթևելով», անցնում է Ծով-Տիեզերքի սահմանը՝ հասնելով Անհունի ափին՝ Ազատությանը: Մանուշակագույն լույսի, նարնջագույն լույսի ծիրանի

երազանքի մեջ բեկվում են ծովի ծփանքները՝ լցնելով հոգու դատարկությունը: Անոսր եթերի մեջ բարձրանում են, փթթում հիացումն ու հրճվանքը. տառապանքն ու ցավը անցնում են, մանկության իրազորված ցնորական երազը գունավորվելով՝ ճշմարտապես վերգաղափարանում են: Այս նյութական, արատավոր իրականության մեջ բնաստվածության հզոր պաշտամունքով բանաստեղծը փարվում է անծայր ափունքին. «Ծովը: Կոծապարու կոհակներուն մէջ նախնական ու յավերժական յոյզ մը կը շարժէր. անտառին պէս բիրային, երկինքին պէս մեկ: Վիհերը կը թեւէին, փրփուրներով բռնկած, եւ անհուն ցնորքի մը տալումին մէջ կ'անհետէին: Իր փրփուրներուն հառաչին նշուլմամբը իր ցլօքերուն խաժ թուփալերովը խոռոչուտ՝ Ծովը կ'անցնէր տիեզերքէն անեզր խորհուրդի մը յարակայքովը, յափտենական կարողութեան մ'ամենակալ ճախրը՝ անբաւ թեւանատամի մը (pte'ranodon) նախաստվածային թռիչով» (Ինտրա, 2014: 64):

Ընդհանրապես, խորհրդապաշտների պատկերային համակարգում Ծով թանձրացականությունը երևակվում է որպես անկորնչելի, անուրանալի, անփոխանցելի, անըմբռնելի, նաև անժխտելի:

Ստեֆան Մալարմեի «Ծովային ժամ» սոնետում կյանքի «անփայլ փրփուրներից» արբած բանաստեղծի հոգին օտար դարձած միջավայրից հեռանում է դյուբական հեռուն: Նա բարձրացրել է խարիսխը մի հազվագյուտ երկրի համար: Անդրհայեցական սարսուռների մեջ մենախոսում է բանաստեղծը. «...Ես կփախչեմ, կհեռանամ, և ոչ մի բան իմ խենթ սրտին, որ կոփվել է վայրագ ծովում, էլ չի կարող սանձահարել... Կհեռանամ, շոգենավը իր կայմերով թող օրորվի ու բարձրացնի խարիսխը մի հազվագյուտ երկրի համար» (Ֆրանսիական պոեզիա, 1984: 279):

Մալարմեից առաջ Լոտրեամոնը վստահությամբ հանգչում է ծովի ալիքների վրա և հանձնվում հպարտ նազանքով լեցուն նրանց երերումներին: Որքա՞ն կուզենար, որ մարդկային վեհությունը ծովի վեհության մարմնացումը լիներ, որքա՞ն հեռու է մարդը բնության կատարելությունից: Մարդու վեհությունը փոխառյալ է, անցողիկ, որ երբեք ակնածանք չի ներշնչում. արարչագործություն է ծովը, ներքին հզոր մղումների գեղեցկություն: Բարձրագլուխ, սոսկալի, գերագույն

կարողությամբ միակը, ստորոգելիներից ամենափառահեղը, վսեմ՝ հավիտենական զորությամբ. «Ես անզոր եմ կռահելու, երբ արձակում ես այն խուլ մոնչյունը հավիտենական, որ այնքան սարսափեցնում է մարդուն, եթե նա նույնիսկ քեզ դիտում է՝ անվտանգ կանգնելով ավիին, այնժամ զգում եմ, թե ինձ չի պատկանում «Ես քո հավասարն եմ» ասելու իրավունքը...» (Ֆրանսիական պոեզիա, 1984: 295-297):

Ջուրը՝ որպես սկիզբ նախագո իմացականության, նույն կերպ է ընկալվում նաև Պոլ Կլոդելի «Բանականությունը և ջուրը» արձակ բանաստեղծության մեջ: Ազատ, զորեղ և արարչագործ է աստվածային բանականությունը, որ չի դադարում ջրերի վրա սավառնելուց. «Եվ քննել եմ ես բանակը երկնից և գրանցել եմ մեծ կերպարներից, որոնք հակվել են ծեր օվկիանոսին... Եվ այսպես՝ ջուրը շարունակում է Բանականությանը, աջակցում է նրան և սնուցանում, Եվ քո Բոլոր արարածների միջև՝ մինչև դու, առկա է որպես հեղուկ մի կապ» (Ֆրանսիական պոեզիա, 1984: 333-335):

Խորհրդապաշտներից հետո Սեն-ժոն Պերսը դարձյալ իր հայացքը պիտի հառեր անդր-ծովի անսահմանությանն ու բազմակերպությանը. «Օ՛ր, ծով, տևական փայլատակություն, եզակի ցլքով դրոշմված մակերես... Ո՛վ բազմաբնույթ և հակասական. դու՝ պառակտումի և միության տեղ, դու՝ չափ, դու՝ անչափ, դու՝ բռնի, դու՝ հեզ և մաքրամաքուր՝ անմաքրության և լպիրշության մեջ, օրինապահ և անիշխանական, դու՝ մեղսակից և ապօրինական, դու՝ խենթութեւառ... և էլի՛, էլի՛ ինչպիսի՞ն ես դու՝ հավիտյան անսպառ և անսպասելի» (Ֆրանսիական պոեզիա, 1984: 373-374):

Ու՛ր էին գնում խորհրդապաշտ բանաստեղծները, դեպի հին, դիցաբանական պատկերացումներ, Համաշխարհային օկիանո՛ս, ո՞ր: Ըստ հին հավատալիքների՝ հավերժական ջրերի մեջ բնակվել է լույսը, և լույսից էլ ստեղծվել է Տիեզերքը: Ընդհանրապես, մեծ է ջրի պաշտամունքային խորհուրդը բոլոր ազգերի դիցաբանությունների մեջ, և այն միտքը, թե ջուրը տիեզերական, նախնական տարերք է, իր տեղն է գտել վերջին մի քանի դարերի արվեստում՝ գերմանացի բանաստեղծներ Նովալիսի, Գյոթեի, կոմպոզիտոր Վագների ստեղծագործություններում: Ըստ նրանց իմաստասիրության՝ անվախճան

ծովի ջրերում է պարփակված հրի ուժով ծնունդ առած կենսական էությունը, և նա՝ այդ էությունն է սկիզբ ու կյանք տվել մնացած ամեն ինչին:

Դեռևս մեր վաղնջական նախնիների պատկերացումներում, հասկացություններում, հոգևոր և մտավոր աշխարհում, մտածողության մեջ նույնպես եղել են նախաստեղծ տիեզերական ջրեր, ջրային տիեզերական տարերք-ծովը՝ արևի ցլքերից շառագունած և ալեկոծ ծով-ծիրանին: «Փորձ մեր էպոսի դիցաբանության մասին» էսսե-աշխատության մեջ Իսահակյանը գրում է. «Ջուրը (ծովը)» բնության մեջ ամենաընդարձակ, անեզր ու հզոր տարերքն է... Միշտ ընդունվում էր երկու ծով՝ երկնային և երկրային՝ իրար միացած: Խորհրդավոր է ծովը, անպարփակելի, անպարտելի: Արևը նրա միջից է ելնում և նրա մեջ սուզվում: Ամպրոպը, ահեղ կայծակը նրա գայրույթի արտահայտություններն են. նա կատաղում է, նա որոտում է: Ահավոր աստված է նա» (Իսահակյան բ, 1977: 156-158):

Իսկական բանաստեղծությունը մարդուն տանում է կատարելության և համաստվածության վերելքներով, հմայական զարմանալի երանությամբ ներազդում մարդկային հույզերին, կապում անվախճան Տիեզերքի Անհունությանը, հաղորդակցում հավերժական Գաղափարի Խորհուրդին. «Ես իմ խորքից ողջ,- գրում է Իսահակյանը,- հասկանում եմ այդ լեզուն-լռությունը, և այդ լռություն-լեզուն հոգումս ճառագայթների պես ցրվելով՝ դառնում է մի մեծ, մի խորը, բարձր ու ցածր, անուշ ու քնքուշ, ահռելի ու սոսկալի երգ... Եվ դուք չե՞ք լսում տիեզերքի լեզուն-լռությունը, որ իմ հոգումս ամեհի երգ դարձավ...» (Իսահակյան ա, 1977: 202-203):

Անապատ և Արև. անհայտ աշխարհների վերջին հանգրվանը

1894 թվականից Իսահակյանը գրում է լռությանը սահմանակից իր անապատային երգերը, իսկ նույն թվականից «Հիշատակարան»-ում արդեն կային փախուստի, մենության թեմաները: Մարդկային հոգու, համամարդկային թախծի և բնությանը ճուլվելու խորունկ զգացողությամբ Իսահակյանը մոտենում է Արևմուտքի մեծ խորհրդապաշտներին. «Ես սիրեցի անապատը,- գրում է Արթուր Ռեմբոն,- հրկիզված այգեստանները, գաղջ խմիչքները: Քարշ էի գալիս ժահա-

հոտ նրբանցքներում և, աչքերս փակած, ընծայվում էի արևին՝ կրակի աստծուն» (Ռեմբո, 2019: 134): Ահա Իսահակյանը. «Եվ անցավ, անցավ ճոխ արշալույսը... Այժմ կեսօր է. արևն է կիզում... Եվ անապատում մենակ ու անմիտ, ծանծրույթից խեղդված՝ ես քարշ եմ գալիս... Արևն է կիզում... և ահա՛, ահա՛ մոտ է երեկոս...» (Իսահակյան ա, 1977: 156): Ահա Ֆեոդոր Սոլոգուբը. «Երբ ապրելն է դժվար, երբ շնչելն է ցավոտ, // Անապատ եմ գնում, որպեսզի երազի թևերով Հասնեմ քեզ ու քամուն թափառող // Եվ պատմեմ, որ դու կաս և պատմեմ քո մասին» (20-րդ դարի ռուսական բանաստեղծություն, 1985: 177):

Իսահակյանը աշխարհահիացման և աշխարհամերժման բանաստեղծ է: Աշխարհահիացումը բնության ներդաշնությանը է պայմանավորված, անվախճան սիրով, բարձրախոհ անուրջներով, իսկ աշխարհամերժումը՝ բիրտ ու զազրելի օրենքներով, շղթայված հայրենիքի իրականությամբ, ոգու սովով, ընչաքաղցությամբ ու քար անտարբերությամբ: Սակայն նա այն հուսահատ, պարտված հոգիներից չէ, որն ամփոփվում է իր մեջ, նրա սիրտը հրդեհվում է մարդկության տառապանքով, և նա աշխարհից հեռանում է կարոտների բեռով. «Կյանքն ու ողջ բնությունը մի երգ է, մի վերք - մի ողջ պոեզիա՝ վառվել, փայլել, շողալ, հնչվել և մարել... պետք է ապրենք ծովի պես՝ մոնչանք և ծփանք՝ ողջ բնությունը մեր մեջ գրկած, պիտի հոգով ու գործով ասպետներ և ազնվականներ լինենք՝ բարձր, սուրբ վշտերով» (Իսահակյան ա, 1977: 110):

Անապատի կարոտով են հնչում «Դեպի անապատ հողմը կուրա...», «Կյանքի ժխորից մտա անապատ...», «Եվ անապատից, հեռու ծովերից...», «Ես կուզեի արևավառ անապատը ամայի...», «Ո՛չ իշխանություն, ո՛չ կռիվ, ո՛չ կին...», «Նայում են ցուլուն աստղերը անշեջ...» և այլ բանաստեղծություններ: «Աբու-Լալա Մահարի» պոեմում ավելի խորանում, ավելի թանձրանում են խորհրդանիշ-պատկերները. Ծովը, Տիեզերքը, Անապատը, Արևը բացահայտվում են իրենց մեծությամբ, անսահմանությամբ, կատարելությամբ:

«Իսահակյանի քնարական հերոսի հոգեբանական նկարագիրը- գրում է Էդվարդ Ջրբաշյանը,- բավական բարդ է, հակասական,

երբեմն անորոշ: Իզուր չէ, որ իր մի փոքրիկ բանաստեղծությունը նա մի քանի անգամ (1903, 1908, 1930 թթ.) դրել է ժողովածուների սկզբում՝ այն համարելով իր ստեղծագործության նախերգանքը, նրա ըմբռնման ելակետը» (Ջրբաշյան, 1982: 135): Խոսքը վերաբերում է «Անհա՛յտ, անորո՛շ, անձն՛ տենչերով» բանաստեղծությանը. «Անհա՛յտ, անորո՛շ, անձն՛ տենչերով // Ձգտում է հոգիս հեռո՛ւ, շատ հեռո՛ւ, // Տխուր ու մոայլ, ինչպես մշուշ-ծով, // Խուլ հեծեծում է ափերի վրա, // Եվ ինչպես երազ - և՛ կա, և՛ չկա...» (Իսահակյան, 1987: 34):

Մարդու կատարելության գաղափարը հոգս է ցնդում, երբ բացահայտվում են նրա արարքները: Երկիրը մեծ է, բայց այն տանջվող ու մտածող մարդու համար բանտ է՝ ճնշող և հուսահատեցնող: Աշխարհն իր բիրտ օրենքներով շղթայում է մարդուն, և նրա հոգին ձգտում է դեպի կարոտների լուսեղեն ափը: Մարդն ինքը տիեզերք է տիեզերքի մեջ, նրա բանական հյուսվածքը, սակայն եղերական է նրա ընթացքը, և Տիեզերքի հավերժական շշուռներին ունկնդիր բանաստեղծը ողբերգական տագնապով խոստովանում է. «Ես ատում եմ նրանց, որովհետև սիրում եմ»: Դառն իրականության արձագանքներում արդարանում են բանաստեղծի զայրույթը, ատելությունը. իր և աշխարհի միջև խորացել է անջրպետը և առանձնությունը, անապատային տրամադրությունը դառնում են գաղափար. «Իմ և աշխարհքի մեջ չկա ներդաշնակություն... Յույց տամ տիեզերական մատյանի մեջ ազգերի ճակատագիրը, անցքերը... ամեն բան անմահ գրված է տիեզերքի մագաղաթների վրա, ամեն բան կենդանի է ժամանակի և տարածության մեջ - ցույց կտամ... Փախուստ, գաղթ. ավերում են քաղաքներ, դպրոցներ, վանքեր. վառում են գրադարաններ, մատյաններ, մանուկների արյան բաղանիք. գերեվարում են մի ժողովուրդ... Տեսնում եմ - Համիդ, Թալեաթ, Էնվեր, Գուլ փաշա, Հորվեզ, ջարդեր, ջարդեր, անապատ, Դեր-Զոր... Ուզում եմ մարել աստղերը, կրծել բուր մարդկանց կոկորդը, ուզում եմ գահավիժվել տիեզերական անդունդի մեջ» (Իսահակյան ա, 1977: 514-515):

Բանաստեղծի հոգին անդորր է գտնում միայն մարդկային աղմուկից հեռու՝ անապատային լուծության մեջ: Անապատ-անսահմանություն, արեգակի ցուլքերի մեջ հրդեհվող ոսկի մի անեզրություն, ուր

երբ ավարտվում է հրեղեն մայրամուտը, իջնում է սրբազան գիշերը, գրկում է հոգին անհուն տենչանքով. «Կյանքի ժխորից մտա անապատ.// Գիշերը եկավ, բազմեց փառավոր,// Եվ հոգնած հոգիս մեղմիկ ու հանդարտ// Գիշերը գրկեց...// Եվ խաղաղ անդորր մի խոր լռություն// Սուրբ անապատում փռվեց, ծավալվեց,// Պահ՝ խորհրդավոր և հանդիսավոր-// Եվ հոգիս հալվեց վեհ լռության մեջ» (Իսահակյան, 1987: 77): Ինչպես վերևում նշվեց՝ «Աբու-Լալա Մահարի» պոեմը պահի տակ ստեղծված գործ չէ: Այն տրամադրությունները, այն «քրմային», ընտրյալ բառ-խորհրդանիշները՝ Ծով, Տիեզերք, Անապատ, Արև, որ, 1894 թվականից սկսած կային «Հիշատակարան»-ի էջերում և առանձին հայեցողական բանաստեղծություններում, պիտի դառնային պոեմի պատկերային համակարգի իմաստասիրությունը:

Արևը, լույսի տրոհումը գույների ու երանգների փոփոխությունները դառնում են ոչ միայն պատկերման միջոցներ, այլև աշխարհայեցողություն: Միայն մեծ մարդասերը կարող է ապրել խորունկ, անանձնական կարոտներով, թափանցել աշխարհի ցավի մեջ, անհունաստեղծ ճառագայթումներով գծել մի նոր, երանելի կյանքի սահմանները: Արևն ինքը կյանքն է, կյանք ծնող ակունքը: Տիեզերք է նա ու տիեզերական աստված, և Իսահակյանի՝ հավերժական հրահույր արևի պաշտամունքը գալիս է անհիշելի վաղնջական ժամանակներից: Արև-կյանք ընկալումը մեկընդմիջտ և անջնջելի է: «Արև» այսօր էլ նշանակում է օր ու արև, այսինքն՝ կյանք, կենդանություն, ողջություն, շնչավորություն: Ինչպես մյուս դիցարաններում, մեր նախնյաց մտածողության մեջ էլ տիեզերական հնամենի տարերք էությունները հետզհետե դարձան մարդատեսք և ոչ միայն մեր նախնիների մտապատկերներում և դիցարանում, այլև մեր լեռների և ժայռերի վրա հայտնվեցին ու դրոշմվեցին արեգակնային հուր-հրեղեն մարդատեսք աստվածներ՝ վաղնջական Արեգ-Արեգակը, նաև՝ Միհրը: Մեր հեթանոսական դիցարանում արեգակնային մեկ ուրիշ աստված էլ ունենք՝ Վիշապաքաղ Վահագնը: Նա ռազմի աստված է ու Արևի: Եվ բոլորովին պատահական չէ, որ Իսահակյանը մշակեց էպոսի «Փոքր Միեր» ճյուղը, իսկ «Հիշատակարան»-ի էջերում կան այսպիսի տողեր. «Ես չեմ ուզում, չեմ ուզում հաշտվել կյանքի հետ, հասարակության հետ.

կոհ'վ նրա դեմ, կոել ու կովել... Արտավազդի շղթաները փշրո'ղ տվեք, Հայո'ց Արտավազդի: Միերի դուռը բացո'ղ տվեք» (Իսահակյան ա, 1977: 287):

«Աբու-Լալա Մահարի» պոեմում Իսահակյանը գորավոր մի մղումով փարվում է Արև-աստծուն՝ որպես գոյության և լինելիության ճանապարհ, որպես հրաշակերտ մեղեդի, որպես անապական լույս, որպես իրագործված տենչերի լուսեղեն ակունք. «Տիեզերական դու բաժակ անհուն՝ ոսկի արբեցման ու երանության, Դու հրճվանքի, հրապույրների հրեղեն գինու անհուն օվկիան» (Իսահակյան, 1987: 253):

Եզրակացություն

Եվ այսպես՝ Ավ. Իսահակյանը մեծ, տիեզերական տարածությունների բանաստեղծ է: Նրա անմահ հոգին տեսել և ճանաչել է Տիեզերքի և Անհունի խորհրդավորությունը, նրա խորագգաց հոգին թևածել է դեպի մարդկության պատմության նախաստեղծ ակունքները, համադրել և վերլուծել հին աշխարհի քաղաքակրթության ստեղծած հոգևոր գանձերը և տեսել, նորովի մեկնել ու բացահայտել ազգային բանարվեստի ոսկի երակների կապը, աղերսները՝ համընթաց գնալով համաշխարհային բանարվեստին: Իր գեղագիտությամբ և աշխարհատեսությամբ, համամարդկային վիշտը տեսնելու և այն գեղարվեստորեն պատկերելու զարմանալի կարողությամբ Իսահակյանը մեկն է համաշխարհային ճանաչում ունեցող այն բանաստեղծներից, ովքեր տեսան Գեղեցիկը և Ողբերգականը կյանքում և մարտնչեցին մեծ խորություններում՝ Տիեզերքի, Արևի պես նայելով Մարդուն և աշխարհին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Զաքարյան Ա.**, 20-րդ դարի սկզբի հայոց բանաստեղծությունը, Գիրք 2, Քնարերգություն, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1977, 438 էջ:
2. **Ինտրա**, Հովին ծայնը, Երկեր, Գիրք Ա, Սարգիս Խաչենց, ՓՐԻԹԻՆՖՈ, Երեւան, 2014, 503 էջ:
3. **Իսահակյան Ավ.**, Հայ դասականների գրադարան, Երկեր, Երևան, «Սովետական գրող», 1987, 892 էջ:

4. **Իսահակյան Ավ.**, Հիշատակարան, Գրական ժառանգություն, Հատոր տասներորդ, «Սովետական գրող», Երևան, 1977, 471 էջ:
5. **Իսահակյան Ավ.**, Երկերի ժողովածու, Հատոր հինգերորդ, «Սովետական գրող» հրատ., Երևան, 1977, 434 էջ:
6. **Հակոբյան Ս.**, Սիմվոլիզմը դրամայի մեջ, 1906, «Մուրճ», թիվ 9:
7. **Ջրբաշյան Է.**, «Չորս գագաթ», Թումանյան, Իսահակյան, Տերյան, Չարենց, «Սովետական գրող» հրատ., Երևան, 1982, 463 էջ:
8. **Ռեմբո Ա.**, Լուսավորումներ. Երկեր եւ նամակներ, Սարգիս Խաչենց. Փրիթինֆո. Անտարես, Երևան, 2019, 500 էջ:
9. **Ռեմբո Ա.**, Բանաստեղծություններ, Գարուն, «Ապոլոն» հրատ., Երևան, 1981, էջ 148-149:
10. **Սարինյան Ս.**, Հայոց գրականության երկու դարը, Գիրք առաջին, Երևան, «Սովետական գրող», 1988, 533 էջ:
11. **Տերյան Վ.**, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, «Հայաստան» հրատ., 1972, 382 էջ:
12. **20-րդ դարի ռուսական բանաստեղծությունը**, Երևան, Երևանի պետական համալսարան, 1985, 532 էջ:
13. **Ֆրանսիական պոեզիա**, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1979, 477 էջ:
14. Поэзия Армении с древнейших времен до наших дней, в переводе русских поэтов. Редакция, вступительный очерк и прим. В. Я. Брюсова, Ереван, «Айастан», 1966, 520 стр.
15. **В. Сутырин**, Очерки литературы Закавказья, Тифлис, ЗАККНИГА, 1928, 280 стр.

REFERENCES

1. **Zak'aryan A.**, 20-rd dari skzbi hajots' banasteghstyuny [Armenian Poetry of the Early 20-th Genturu], Girk' 2, Hajk. SSH GA hrat., Erevan, 1977, 438 ej.
2. **Intra**, Hovin dzajny [The Sherherd's voice], Yerker, Girk' A, Sargis Khach'ents', P'RIT'INFO, Yerevan, 2014, 503 ej.
3. **Isahakyan A.**, Hay dasakanneri gradaran, Yerker [Library of Armenian Glassics, Works], Yerevan, "Sovetakan grogh", 1987, 892 ej.
4. **Isahakjan A.**, Hishatakaran, Grakan zharrangut'yun [Memorial, Literary Heritage], Hator tasnerord, "Sovetakan grogh", Yerevan, 1977, 471 ej..
5. **Isahakyan A.**, Yerkeri zhoghovatsu [Collection of Works], Hator hingerord, "Sovetakan grogh" hrat., Yerevan, 1977, 471 ej.

6. **Hakobyan S.**, Simvolizmy dramayi mej [Symbolism in drama], 1906, “Murch”, t’iv 9.
7. **Jrbashyan E.**, “Ch’ors gagat” T’umanyan, Isahakyan, Teryan, Charents’ [“Four Peaks”, Tumanyan, Isahakyan, Teryan, Charents],, “Sovetakan grogh” hrat., Yerevan, 1982, 463 ej.
8. **Rembo A.**, Lusavorumner, yerker yev namakner [Illuminations, Works and Letters], Sargis Khach’ents’, PRITINFO, ANTARES, Yerevan, 2019, 500 ej.
9. **Rembo A.**, Banasteghtsut’yunner [Poems], Garun, “Apolon” hrat., Yerevan, 1981, ej 148-149.
10. **Sarinyan S.**, Hayots’ grakanut’yan yerku dary [Two Centuries of Armenian Literature, Book One], girk’ arrajin, Yerevan, “Sovetakan grogh”, 1988, 533 ej.
11. **Teryan V.**, Yerkeri zhoghovatsu, [Collection of Works], H. 1, “Hayastan” hrat., Yerevan, 1972, 382 ej.
12. 20-rd dari rrusakan banasteghtsut’yuny, [Russian Poetru of the 20-th Century], Yerevan, Yerevani petakan hamalsaran, 1985, 532 ej.
13. Fransiakan poyezia [French Poetru], Yerevan, Yerevani hamalsarani hrat., 1979, 474 ej.
14. Poeziya Armenii s drevneyshikh vremyon do nashikh dney, Armyanskaja poeziya v perevodakh V. Ya. Bryusova” [“Armenian Poetry in Translations by V Ya. Bryusov”, Poetry of Armenia from Ancient Times to the Present Day], Erevan, “Hayastan”, 1966, 520 ej.
15. **V. Sutyurin**, Ocherki literatury Zakavkaz’ya [Essays on the Literature of Transcaucasia], Tiflis, ZAKKNIGA, 1928, 280 ej.